ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՐԾԱՆԵՐԸ

ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ ԿՐԵՄԼԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՊԱԼԱՏՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՍՀՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ 250-ԱՄՅԱԿ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

Սովետական գիտության նվաճումների համաժողովրդական ստուգատես դարձավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյա հոբելյանի տոնակատարությունը, որը ցուցադրեց սովետների երկրի գիտնականների բարձր ակտիվությունը, նրանց անխախտ միասնությունը ՍՄԿԿ-ի հետ, ջերմագին ձգտումը՝ կենսագործելու կոմունիստական շինարարության հոյակապ ծրագիրը։

Սովետական գիտությունը մեծ ավանդ է ներդրել ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման գործում, բարձր զարգացած սոցիալիստական էկոնոմիկայի, երկրի պաշտպանական հզորության ստեղծման գործում, աշխատավորների բարեկեցության բարձրացման, կրթության ու կուլտուրայի զարգացման, խաղաղության և ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։

Հոբելյանական տոնահանդեսները եզրափակվեցին հոկտեմբերի 7-ին Կրեմլի Համագումարների պալատում կայացած հանդիսավոր նիստով, որը նվիրված էր ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250-ամյակին։ Ակադեմիայի հոբելյանական նստաշրջանին մասնակցում էին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի իսկական անդամները ու թղթակից-անդամները, Մոսկվայի աշխատավորության, կուսակցական, սովետական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, գիտությունների հանրապետական և այլ ազգային ակադեմիաների գիտնականները, արտասահմանցի գիտնականներ։

Ներկաները բուռն օվացիայով, հոտնկայս դիմավորեցին կոմունիստական կուսակցության ու սովետական պետության ղեկավարներին։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հանդիսավոր հոբելյանական նստաշրջանը բաց արեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնակատար, ակադեմիկոս Վ. Ա. Կոտելնիկովը։

Զայնը տրվում է ՍՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնևին։ Հանդիսավոր նիստի մասնակիցները Լ. Ի. Բրեժնևին դիմավորում են ջերմ, երկարատև օվացիայով։ Բոլորը ոտքի են կանգնում։

ԸՆԿԵՐ Լ. Ի. ԲՐԵԺՆԵՎԻ ՃԱՌԸ

Բանկագին ընկերնե՛ր։

Հարգելի արտասահմանյան հյուրեր։

Մեր երկրի գիտությունների ակադեմիան 250 տարեկան է։ Ամբողջ սովետական ժողովուրդը այդ հոբելյանը նշում է, որպես ազգային կուլտուրայի մեծ տոն, որպես սովետական գիտության նվաճումների համաժողովրդական ստուգատես։

Գիտությունների ակադեմիայի հոբելյանը մեզանում ընկալվում է որպես համաժողովրդական նշանակություն ունեցող իրադարձություն, նախ, որովհետև լուսավորությունն ու գիտությունը մեր երկրում ավանդաբար հսկայական հարգանք ու սեր են վայելում։ Երկրորդ, որովհետև մինչև օրս ոչ մի հասարակարգում գիտությունը տնտեսական ու հասարակական զարգացման մեջ

այնպիսի, ես կասեի, որոշիչ դերը չի դրավել, ինչպես որ սոցիալիզմի օրոք, և մանավանդ, կառուցվող կոմունիզմի օրոք։ Տեխնիկա-տնտեսական ու սոցիալական առաջընթացի, ժողովրդի հոգևոր մշակույթի և նրա բարեկեցության բարձրացման կենսարար աղբյուր՝ ահա թե ինչ է մեզ համար այսօր գիտությունը։

Ուստի ես մեծ գոհունակության զգացումով եմ կատարում մեր կուսակցության Կենտրոնական կոմիտեի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության և սովետական կառավարության հանձնարարությունը՝ ջերմորեն և ի սրտե շնորհավորելու մեր հոբելյարին՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային, նրա գիտնականներին, Սովետական Միության գիտության բոլոր աշխատողներին։

Գիտությունների ակադեմիան հպարտությամբ կարող է նայել իր պատմության երկուսուկես դարին։ Նա ոչ դյուրին, բայց հիրավի փառավոր ուղի է անցել։ Ցարական վարչակարգի բռնակալության, երկրի բազմադարյան հետամնացության, տիրապետող դասակարգերի մեծ մասի կողմից գիտության ու կուլտուրայի հարցերի նկատմամբ ցուցաբերվող անտարբերության դժվարին պայմաններում էր ձևավորվում ու գործում Ռուսաստանի գիտությունների ակադեմիան։ Բայց ակադեմիան կարողացավ իր շուրջը համախմբել այն ամենն լավագույնը, ինչ կարող էր տալ երկրի գիտական ու կուլտուրական կյանքը այն ժամանակ, կարողացավ հենվել Արևմուտքի առաջադեմ գիտնականների փորձի վրա։ Արդեն 18-րդ դարում նրա ամբողջ գործունեությունը նոր մակարդակի բարձրացրեց ժողովրդի ցածր խավերից ելած հանճարեղ գիտնական-էնցիկլոպեդիստ Միխայիլ Վասիլևիչ Լոմոնոսովի տիտանական աշխատանքը։

Հայրենական ու համաշխարհային գիտությունը ընդմիշտ փառավորեցին մեծ գիտնականներ Ն. Ի. Լոբաչևսկին և Դ. Ի. Մենդելևը, Ա. Ս. Պոպովը և Ի. Ի. Մեչնիկովը, Ն. Ի. Պիրոգովը, Ի. Մ. Սեչենովը, Ն. Ե. Ժուկովսկին և Կ. Է. Ցիոլկովսկին, Ի. Պ. Պավլովը և Կ. Ա. Տիմիրյազևը, Վ. Ն. Վերնադսկին և Ա. Ա. Բոգոմոլեցը, Ի. Վ. Կուրչատովը և Ս. Պ. Կորոլյովը։ Նշանավոր մարդկանց անունների այս ցանկը, որոնց անմահ գործերը հարստացրել են մարդկային քաղաքակրթությունը, կարելի կլիներ շարունակել։ Իր գործունեության հանրագումարով գիտությունների ակադեմիան անգնահատելի ավանդ է մուծել մեր մեծ երկրի բոլոր ժողովուրդների գիտության, կուլտուրայի և լուսավորության զարգացման գործում։

Հիմնականում նախահեղափոխական ակադեմիայի պաշտոնական շրջանակներից դուրս, բայց գիտության ու կուլտուրայի զարգացման ընդհանուր հոսանքի հետ անխզելի կապի մեջ է տեղի ունեցել հասարակական գիտությունների, առաջավոր հասարակական մտքի հզոր թռիչքը Ռուսաստանում։ Ա. Ն. Ռադիշչևը և Ն. Ի. Նովիկովը, Վ. Գ. Բելինսկին և Ա. Ի. Գերցենը, Ն. Գ. Չերնիշևսկին և Ն. Ա. Դոբրոլյուբովը, Ռուսաստանում մարքսիստական մտքի ռահվիրա Գ. Վ. Պլեխանովը՝ նրանք բոլորն էլ նպաստել են Ռուսաստանի հոգևոր դարթոնքին, մեր երկրի ժողովուրդների հեղափոխական գիտակցության ձևավորմանը։ Նրանց գործունեությունը, վերջին հաշվով, օգնեց հող նախապատրաստելու Լենինյան հանճարի մեծ սխրանքի համար, բանվորների և գյուղացիների հեղափոխական կուսակցության ստեղծման համար, մեծ Հոկտեմբերի հաղթանակի համար։

Մեծագույն հեղափոխականներ և մեծագույն գիտնականներ Կարլ Մարքսը, Ֆրիդրիխ Էնգելսը և Վլադիմիր Իլյիչ Լենինը, հեղաշրջում կատարելով հասարակության մասին գիտության մեջ, գիտությունը ի սպաս դրեցին հեղափոխությանը։ Ինչպես որ նրանք կանխատեսում էին, սոցիալիստական հեղափոխության հաղթանակը արմատապես փոխեց գիտության դերն ու տեղը հասարակության մեջ։ Ինքնակալության ճնշումից և կապիտալի ստրկացումից ազատագրված գիտությունը դարձավ այն, ինչի մասին դարերով երազում էին նրա լավագույն ամենատաղանդավոր ներկայացուցիչները, այն է՝ ժողովրդի կյանքի բարելավման, նրա նյութական ու հոգևոր հարստության ավելացման հզոր միջոց։ Հենց դրա համար էլ մեր երկրի ականավոր շատ գիտնականներ, նույնիսկ մարքսիզմի գաղափարախոսությունից սուբյեկտիվորեն հեռու կանգնած գիտնականներ, ջերմորեն ողջունեցին Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, աջակցություն ցույց տվեցին Վ. Ի. Լենինի գլխավորած սովետական կառավարությանը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ աշխատանքի ու գիտության մարդիկ միասին ընթացան սոցիալիզմի կառուցման անծանոթ ուղիներով։

Սոցիալիզմը և գիտությունը անբաժանելի են, և դրանում է սոցիալիզմի հաղթանակի պատճառներից մեկը։ Միայն սոցիալիզմը հնարավոր դարձրեց գիտության նվաճումների օգտագործումը ի շահ ժողովրդի, թույլ տվեց բացահայտելու այն ստեղծագործական կարողություններն ու տաղանդները, որոնք առատորեն առկա են ամեն մի ժողովրդի մեջ։ Եվ միայն հենվելով բնության ու հասարակության մասին գիտության նորագույն նվաճումների վրա, կարելի է հաջողությամբ կառուցել սոցիալիզմ և կոմունիզմ։

Բնական է, որ երիտասարդ սովետական պետությունը և նրա հիմնադիր Վ. Ի. Լենինը առանձնահատուկ հոգատարություն ցուցաբերեցին գիտնականների, նրանց աշխատանքի ու կենցաղի պայմանների նկատմամբ։ Վ. Ի. Լենինը անձամբ ուշադրություն նվիրեց գիտությունների ակադեմիայի գործունեության գլխավոր ուղղություններին, երկրի զարգացման կուսակցության պլանների իրագործմանը, նրա մասնակցության ձևերը որոշելուն։ Հեղափոխությունը հետզհետե փոխեց նաև ակադեմիայի սոցիալական դեմքը, նրա դասակարգային կազմը։ Գիտահետազոտական ինստիտուտներն ու լաբորատորիաները եկան բանվորների և գյուղացիների ծոցից ելած տաղանդավոր երիտասարդներ, մեր հայրենիքի բազմաթիվ ազգությունների ներկայացուցիչներ։ Դա դարձավ գիտությունների ակադեմիայի համալրման բարերար աղբյուրը։

Մտովի մի հայացք գցելով անցած տասնամյակների պատմության վրա՝ մենք, ընկերներ, լիակատար հիմունքով կարող ենք ասել՝ սովետական գիտնականները արդարացրին կոմունիստական կուսակցության, սովետական պետության, սովետական ժողովրդի վստահությունն ու հույսը։

Նրանք եղան ժողովրդական տնտեսության զարգացման առաջին, իսկապես գիտական, հեռանկարային պլանի՝ ԳՈԷԼՐՈ-յի պլանի ստեղծման ամենաակտիվ մասնակիցները։ Նրանք եռանդուն մասնակցություն ցուցաբերեցին մեր սոցիալիստական շինարարության առաջին հնգամյա պլանների մշակմանն ու իրականացմանը։ Գիտության խոսքը այստեղ առավել ևս արժեքավոր էր մանավանդ այն պատճառով, որ սովետական երիտասարդ երկիրը

ընթանում էր անծանոթ ուղիներով՝ հնարավորություն չունենալով հենվելու որևէ մեկի վարձի վրա, կամ նույնիսկ սովորելու որևէ մեկի սխալների վրա։

Սովետական գիտնականները օգնեցին՝ երկրում ստեղծելու ժամանակակից արդյունաբերության հիմնական ճյուղերը։ Նրանք հսկայական աշխատանք ծավալեցին լենինյան կուլտուրական հեղափոխությունն իրականացնելու, ժողովրդական կրթության նոր սիստեմ՝ դպրոցներ, բանֆակներ, տեխնիկումներ, բուհեր ստեղծելու, նախկինում հետամնաց մի շարք ժողովուրդների համար գիր ու գրականություն ստեղծելու ուղղությամբ։

Այս ամենը, ընկերներ, մեր գիտնականների, և ամենից առաջ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի, ակնառու ավանդն է սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում։ Կուսակցությունը և մեր ամբողջ ժողովուրդը երբեք այդ չեն մոռանա։

Ընդլայնվում էին մեր գիտության խնդիրները, մեծանում նրա հնարավորությունները, հարստանում էին նաև երկրում գիտական աշխատանքի կազմակերպական ձևերը։ Գիտությունների ակադեմիան շատ բան արեց կուսակցության որոշմամբ ստեղծված երկրի առաջատար ճյուղային գիտական կենտրոնների՝ ՍՍՀՄ բժշկական գիտությունների ակադեմիայի, մանկավարժական գիտությունների ակադեմիայի, գյուղատնտեսության գիտությունների ակադեմիայի, գեղարվեստի ակադեմիայի ձևավորման ու զարգացման համար։

Մեր կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կոնկրետ արտահայտություններից մեկը եղավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ղեկավարությամբ ծավալված ակտիվ աշխատանքը միութենական հանրապետություններում գիտության կազմակերպման ու զարգացման ուղղությամբ։ Ակադեմիայի մասնաճյուղերի հիմքի վրա ստեղծվեցին հանրապետությունների գիտությունների ակադեմիաները։ Եվ այսօր արդեն չի կարելի սովետական գիտնականների նվաճումների մասին խոսել՝ հաշվի չառնելով մեր սովետական գիտության ազգային փառավոր ջոկատների ակնառու հայտնագործությունները։

Ստալինարգմյան տարիները բերեցին այդ պրոցեսի հետագա զարգացում. ստեղծվեց և համաշխարհային գիտության մեջ ամուր կերպով իր տեղը գրավեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի Սիբիրի բաժանմունքը։ Կազմավորվեցին և հաջողությամբ գործում են ակադեմիայի Ուրալի և Հեռավոր Արևելքի գիտական կենտրոնները։

Ուզում եմ առանձնապես կանգ առնել մի կարևորագույն հարցի՝ մեր գիտության կուսակցականության վրա։ Ինչ ճյուղում էլ աշխատեն սովետական գիտնականները, նրանց միշտ պետք է հատուկ լինի մի բնորոշ գիծ՝ կոմունիստական բարձր գիտակցականությունը և սովետական հայրենասիրությունը։

Սովետական գիտնականը, եթե, իհարկե, նա իսկական սովետական գիտնական է, իր ամբողջ գիտական գործունեության մեջ ելնում է մարքսիզմ-լենինիզմի գիտական աշխարհայացքից, հանդիսանում կոմունիզմի գործի ակտիվ մարտիկ՝ ընդդեմ ռեակցիայի և խավարամոլության ամեն տեսակ ուժերի։ Մեր գիտնականները իրենց ամբողջ պրակտիկ գործունեությունը ենթարկում են կոմունիզմի վսեմ իդեալների կենսագործման խնդրին։

Սովետական գիտնականը միշտ վստահ է, որ իր հայտնագործությունները կծառայեն մարդասիրական վեհ նպատակների։ Մեր գիտնականները հսկայական ավանդ մուծեցին հիտլերյան Գերմանիայի դեմ սովետական ժո-

զովրդի հաղթանակն ապահովելու գործում, և դա ավանդ էր բարբարոսության ու ագրեսիայի ուժերի նկատմամբ, բանականության, արդարության և խաղաղության հաղթանակի գործում։

Ի պատասխան պատերազմի հրձիգների մեքենայությունների՝ սովետական գիտնականների կողմից արդիական հզոր զենքի ստեղծումը վերջ տվեց իմպերիալիզմի միջուկային մենաշնորհին, անխորտակելի դարձրեց մեր երկրի պաշտպանությունը։ Միևնույն ժամանակ դա օգնեց ամրապնդելու խաղաղության ուժերի դիրքերը ամբողջ աշխարհում և զգալիորեն բազմապատկեց մեր խաղաղ շինարարության հնարավորությունները։

Դարեդար կապրի սովետական գիտության հերոսական սխրանքը հրթիռա-տիեզերական տեխնիկայի ստեղծման և տիեզերքի յուրացման գործում։ Ցնտեսական ու պաշտպանական հզորության ամրապնդումը Սովետական Միությանը թույլ տվեց միջազգային ասպարեզում հաջողությամբ ակտիվ «հարձակում» ծավալել ընդհանուր խաղաղությունն ամրապնդելու նպատակով։

Մեր ժամանակներում սովետական գիտնականները եռանդուն կերպով և տարբեր ձևերով մասնակցում են Սովետական Միությունում կոմունիստական հասարակարգի կառուցման պատմական խնդրի լուծմանը, աշխարհի խաղաղությունն ամրապնդելու մեր ընդհանուր պայքարին։

Կոմունիստական կուսակցությունը, սովետական պետությունը, մեր ամբողջ ժողովուրդը բարձր են գնահատում և, ինչպես գիտենք, արժանավայել կերպով են նշում ականավոր գիտնականների աշխատանքը, որոնք այժմ գործում են ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հովանու տակ և կազմում սովետական արդի գիտության փառքը։

Մեր առջև, ընկերներ, վիթխարի խնդիրներ են ծառացած։ Խոսքը վերաբերում է սովետական հասարակության կյանքի բոլոր կողմերի՝ էկոնոմիկայի, հասարակական հարաբերությունների, մարդկանց գիտակցության հետագա զարգացմանը այն ուղղությամբ, որ պահանջում են մեր կոմունիստական իդեալները, և գիտության ու տեխնիկայի վերջին նվաճումների հիմքի վրա։ Կուսակցությունը առաջ է քաշել հսկայական կարևորություն ունեցող խնդիր՝ գիտատեխնիկական հեղափոխության նվաճումները միացնել սոցիալիզմի առավելությունների հետ։

ՍՄԿԿ XXIV համագումարը և կուսակցության Կենտրոնական կոմիտեի հաջորդ պլենումները որոշեցին արդի փուլում տնտեսական քաղաքականության գլխավոր կողմերը, ձևակերպեցին կառավարման ու պլանավորման բնագավառում նոր, կյանքի կողմից թելադրվող մոտեցումներ։ Գիտական հիմքի վրա հիմնավորապես մշակվեցին և հետևողականորեն կենսագործվում են կուսակցության ագրարային քաղաքականության ժամանակակից ուղղությունները։

Համաշխարհային ասպարեզում ուժերի այժմյան տեղաբաշխման ուսումնասիրությունը թույլ տվեց մշակել և հաջողությամբ կենսագործել ծավալուն արտաքին-քաղաքական ծրագիր՝ խաղաղության ծրագիրը։

Այդ բոլոր խնդիրների լուծման, պլանների մշակման ու դրանց կենսագործման ասպարեզում կուսակցությանը հսկայական օգնություն են ցույց տվել ու ցույց են տալիս գիտնականները, գիտության, տեխնիկայի և հասա-

բակական գիտությունների տարբեր ճյուղերի մասնագետները։ Դրա համար կուսակցությունը նրանց բոլորին սրտանց շնորհակալություն է հայտնում։

Սակայն հետագայում, ընկերներ, հարկ կլինի աշխատել է՛լ ավելի շատ, է՛լ ավելի հաստատակամորեն և է՛լ ավելի արդյունավետ։ Մենք մտադիր չենք ձեզ թելադրել գիտական թեմատիկայի մանրամասնությունները, հետազոտությունների ուղիները ու մեթոդները. դա իրենց՝ գիտնականների գործն է։ Բայց ահա գիտության զարգացման գլխավոր ուղղությունները, կյանքի կողմից առաջ քաշվող գլխավոր խնդիրները մենք կորոշենք համատեղ։

Գնալով իր XXV համագումարին ընդառաջ՝ կուսակցությունը գիտնականներից սպասում է նոր պրոցեսների ու երևույթների ավելի ու ավելի խոր ու համարձակ հետազոտում, ակտիվ ավանդ գիտատեխնիկական առաջադիմության գործում, ծագող պրոբլեմների մտածված վերլուծություն, պատասխանատու հանձնարարականներ դրանց լուծման լավագույն եղանակների մասին՝ ի շահ երկրի հզորության ամրապնդման, ժողովրդի կյանքի բարելավման, ի շահ կոմունիզմի կառուցման։

Մենք հիմա մոտեցել ենք այնպիսի բնագծի, երբ ամբողջ հասակով ծառացել է տեխնիկատնտեսական հետագա զարգացման գլխավոր ուղղությունների, տևական ժամանակաշրջանի համար գիտատեխնիկական առաջադիմության ստրատեգիայի մշակման հարցը։ Կառուցելով կոմունիզմ, մենք պետք է կարելություն չափ պարզ պատկերացնենք, թե ինչպիսին կլինի գալիք հասարակության արտադրական ապարատը։

Հասկանալի է, որ առանց հիմնարար գիտական հետազոտությունների այստեղ դժվար է որևէ բան անել։ Գիտնականները պետք է տեսնեն վաղվա տեխնիկան, աշխատեն ապագայի մեքենաների ստեղծման վրա։

Դրա հետ մեկտեղ ուզում եմ, որպես խիստ ուրախալի երևույթ, նշել կյանքի հետ գիտության հարաճուն ուղղակի կապը, այն ամենօրյա կոնտակտները, որ հաստատվել են մեր գիտական հիմնարկների և մեր արդյունաբերության միջև։ Այժմ գիտահետազոտական հիմնարկները հաճախ տեխնիկական կարևոր պրոբլեմները մշակում են անմիջականորեն գործարանների, ֆաբրիկաների և կառույցների պատվերով՝ հենվելով նրանց գործնական փորձի վրա, օգնում են նրանց արտադրությունը հասցնելու տեխնիկական ավելի բարձր մակարդակի, մեծացնելու աշխատանքի արտադրողականությունը։

Միաժամանակ գիտնականները նպաստում են ինժեներների, տեխնիկների և բանվորների գիտական ու տեխնիկական կրթության բարձրացմանը, նրանց ներգրավում գիտական պրոբլեմների մշակման գործում։

Այս ամենը, ընկերնե՛ր, սկզբունքորեն կարևոր նոր երևույթներ են։ Դրանք հսկայական նշանակություն ունեն ինչպես մեր տեխնիկական առաջադիմության արագացման, այնպես էլ կոմունիստական շինարարության սոցիալական խնդիրների լուծման համար։

Գիտությունը պետք է ավելի ու ավելի ակտիվորեն ծառայի նաև հասարակության գլխավոր արտադրողական ուժի զարգացմանը՝ բուն մարդու, նրա ընդունակությունների և ձիրքերի զարգացմանը, այն օգուտի ավելացմանը, որ նա բերում է հասարակությանը։ Գիտնականները կոչված են ակտիվորեն մասնակցելու աշխատավորական ամենալայն զանգվածների մեջ գիտական աշխարհայացքի տարածման մեծ գործին, նպաստելու ժողովրդական կրթության հետագա վերելքին, բնակչության ֆիզիկական, բարոյական և գեղա-

գիտական զարգացմանը, կոմունիզմի վեհ ու ազնիվ նորմերին համապատասխան։

Նրանք կոչված են՝ օգնելու կուսակցությանը ավելի ճիշտ լուծելու այնպիսի պատմական խնդիրներ, ինչպիսիք են դասակարգային սահմանների աստիճանական ջնջումը և մեր հասարակության մեջ սոցիալական լիակատար միատարրության հաստատումը, կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հետագա զարգացումը, ամբողջ սովետական ժողովրդի միասնության ամրապնդումը։

Մի խոսքով, ընկերնե՛ր, ինչպես տեսնում եք, արդի դարաշրջանում հասարակության հանդեպ սովետական գիտնականի պատասխանատվությունը անչափ մեծացել է։ Այն պրոբլեմների մասշտաբայնության և բարդության աճի հետ մեկտեղ, որ մեր զարգացման ընթացքում մենք դնում ենք մեր առջև, անշեղորեն աճում է նաև հասարակության մեջ գիտակցական հիմունքի դերը՝ կուսակցության դերը, որպես կոմունիզմի կառուցման ղեկավար, ուղղություն տվող ուժի, ինչպես նաև գիտության դերը, որը կոչված է ստեղծագործաբար մշակելու այն պրոբլեմները, որոնց լուծմամբ զբաղված են կուսակցությունը, պետությունը, ժողովուրդը։

Մեր օրերում բարձր է սովետական գիտության միջազգային հեղինակությունը։ Աշխարհի կայուն խաղաղության, ազատության և առաջադիմության գործի համար մեր կուսակցության և պետության ընդհանուր պայքարի անկապտելի մասն է ինտերնացիոնալ գիտական և գիտատեխնիկական կապերի զարգացումը։ Այստեղ պետք է առանձնապես նշել համագործակցությունը սոցիալիստական ընտանիքի պետությունների գիտական հիմնարկների հետ՝ զարգացած սոցիալիզմի և կոմունիզմի կառուցման տեսության ու պրակտիկայի կարևոր պրոբլեմների լուծման երկարաժամկետ ծրագրերի իրականացման ուղղությամբ։

Միջազգային լարվածության թուլացման իրադրության մեջ հաջողությամբ զարգանում են նաև փոխշահավետ գիտական ու գիտատեխնիկական կապերը այլ հասարակական սիստեմի պատկանող շատ պետությունների հետ։ Նրանց հետ համագործակցությունն այսօր ընդգրկում է ճյուղերի լայն սպեկտր՝ գյուղատնտեսություն և տրանսպորտ, բժշկություն և շրջակա միջավայրի պահպանություն, ատոմային էներգիա և տիեզերական երևույթներ, ուրիշ շատ բաներ։

Ցանկանում եմ ի սրտե մեր գիտնականներին ու նրանց արտասահմանյան կոլեգաներին նոր հաջողություններ մաղթել՝ ժողովուրդների համար այդ բոլոր մեծ ու կարևոր գործերում։

Ընկերնե՛ր։ Հիմա մեր երկիրը գիտական հզոր պոտենցիալ ունի։ Ավելի քան մեկ միլիոն մարդ մեկանում աշխատում են գիտության տարբեր բնագավառներում։ Դա մեծ ուժ է, և շատ կարևոր է այն ճիշտ օգտագործել։

Այն պայմաններում, երբ խիստ մեծացել է գիտության դերը, և նրա վրա ծախսվում են ավելի ու ավելի նշանակալի միջոցներ, առավել քան երբևիցե, կարևոր է դառնում գիտական հիմնարկների աշխատանքի արդյունավետության բարձրացումը, այդ գործում եղած թերությունների վերացումը։

Ինչ մեղքներս թաքցնենք. գիտական հետազոտությունների դեռ ոչ բոլոր գլխավոր բնագավառներում են մեր գիտնականները դուրս եկել ժամանակակից գիտության ամենաառաջավոր դիրքերը։ Դուցե դժվար բան է միանգամից ամենուրեք առաջինը լինել։ Բայց առավել ևս կարևոր է ունենալ գիտական որոնում-

ների լավ մտածված ստրատեգիա, ուժերն ու միջոցները կենտրոնացնել վճռական ուղղություններում։

Մեզանում մշտապես աճում է գիտահետազոտական ինստիտուտների և մյուս գիտական հիմնարկների թիվը։ Դա, ըստ Լենինի, սկզբունքորեն օրինաչափ է։ Բայց գաղտնիք չէ, որ նրանց հասարակական փոխհատուցումը բնավ էլ ամենուրեք չէ, որ միատեսակ է։ Գիտական հիանալի կոլեկտիվների հետ մեկտեղ, որոնցով հպարտանում է երկիրը, կան նաև այնպիսիները, որոնք զգալի չափով աշխատում են դատարկ ընթացքով, իրենց ուժերը նվիրում երկրորդական հարցերին, ունեն բավական թույլ կադրեր։

Էլ ո՞վ, եթե ոչ իրենք՝ գիտնականները և ամենից առաջ գիտությունների ակադեմիան իր հսկայական փորձով, պետք է մտածի այն մասին, թե ինչպես ամենից լավ և ամենից արագ վերացնել այդ թերությունները։ Այդ բանին է ձեզ կոչ անում կուսակցությունը, ընկերնե՛ր, այդ է նա սպասում ձեզանից։

Անտարակույս, մեր հասարակական օրգանիզմի մյուս օղակների հետ մեկտեղ շատ մեծ կարող է լինել և պետք է լինի գիտնականների ու գիտական հիմնարկների դերը նաև այնպիսի կարևոր խնդրի լուծման գործում, ինչպիսին է արտադրության պրակտիկայում գիտական նվաճումների օգտագործման արագացումը։

Մի խոսքով, ընկերներ, ես այսպես կասեի. որքան կուսակցությունը բարձր է գնահատում մեր գիտնականների աշխատանքը և նրանց դերը կոմունիստական շինարարության մեջ, այնքան նա նրանցից շատ բան է սպասում, այնքան բարձր պահանջներ է ներկայացնում նրանց։ Դուք, կարծում եմ, դրանից չեք նեղանում։ Չէ որ դա նշանակում է, որ գիտական դիտելիքները, հասարակության մտավոր պոտենցիալը մեզանում դառնում են ավելի ու ավելի թանկարժեք հանրային հարստություն։

Կես դար առաջ, քաղաքացիական պատերազմի ժամանակ, ընդհանուր քայքայվածության և սովի դժնդակ պայմաններում Վ. Ի. Լենինը աներեր համոզմունքով ասել է. «Գիտության, պրոլետարիատի և տեխնիկայի ներկայացուցիչների դաշինքի առաջ չի դիմանա ոչ մի խավար ուժ» (Երկերի լիակ. ժող. հատ. 40, էջ 189)։ Մենք ձեզ հետ միասին բախտ ունենք տեսնելու, թե ինչպես է իրականանում այդ մեծ մարգարեությունը։

Գիտության և արտադրության դաշինքի առաջ, բանվոր դասակարգի, կոլտնտեսային գյուղացիության և աշխատավոր մտավորականության անսասան դաշինքի առաջ նահանջում են դարի բոլոր խավար ուժերը, և դա հանգեցնում է մարդկային բանականության ու մարդասիրության իդեալների իսկական հաղթանակին։

Թույլ տվեք վստահություն հայտնել, որ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան, երկրի գիտահետազոտական հիմնարկների կոլեկտիվները, բոլոր սովետական գիտնականները այսուհետև ևս իրենց բոլոր ուժերը կնվիրեն կոմունիզմի մեծ գործի հաղթանակի համար մղվող պայքարին։

Այժմ թույլ տվեք կատարել ինձ հանձնարարված հաճելի առաքելությունը՝ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային հանձնել արժանի պարգևը՝ Լենինի շքանշանը։

(Ընկեր Լ. Ի. Բրեժնևը ընթերցում է ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագիրը ՍՍՀՄ գիտությունների ակադեմիան Լենինի շքանշա-

նով պարգևատրելու մասին։ Դահլիճում բռնկում են բուռն ծափահարություններ։ Բոլորը ոտքի են կանգնում։

Օվացիան նոր ուժով բռնկեց, երբ ընկեր Լ. Ի. Բրեժնևը Լենինի շքանշանն ամրացրեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի դրոշին։

Այնուհետև ընկեր Լ. Ի. Բրեժնևը երկարատև ծափահարությունների ներքո հանդիսավոր նիստի նախագահությանը հանձնեց ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության, ՍՍՀՄ Մինիստրների սովետի ողջույնի տեքստը՝ ուղղված Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության գիտությունների ակադեմիային, գիտնականներին, սովետական գիտության բոլոր աշխատողներին)։

(Ընկեր Լ. Ի. Բրեժնևի ճառը լսվեց հսկայական ուշադրությամբ և բազմիցս ընդհատվում էր բուռն, երկարատև ծափահարություններով)։

Ընկեր Լ. Ի. Բրեժնևի ճառը հանդիսավոր նիստի մասնակիցները լսեցին հսկայական ուշադրությամբ։ Այդ ճառը խորին հետաքրքրությամբ ընկալեցին միլիոնավոր մարդիկ մեր երկրում և աշխարհի շատ պետություններում։ Լեոնիդ Իլյիչի ճառը հաղորդվում էր կենտրոնական հեռուստատեսությամբ, «Ռնտերվիդենիե», «Օրբիտա», «Վոստոկ» սիստեմներով։

Ապա «ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի 250 տարին» զեկուցումով հանդես եկավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի պրեզիդենտի պաշտոնակատար, ակադեմիկոս Վ. Ա. Կոտելնիկովը։

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. Ա. ԿՈՏԵԼՆԻԿՈՎԻ ԶԵԿՈՒՑՈՒՄԸ

Թույլ տվեք, թանկագին Լեոնիդ Իլյիչ, այս դահլիճում բոլոր ներկա գտնվողների անունից Ձեզ ամբողջ սրտով ջերմ շնորհակալություն հայտնել սովետական գիտնականներին հղված ողջույնի ջերմ խոսքերի համար, նրանց աշխատանքը, ինչպես նաև մեր մեծ հայրենիքի առաջադիմության գործում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ներդրած ավանդը բարձր գնահատելու համար։ Ձեր փայլուն, խորիմաստ ճառը գիտնականների բազմահազարանոց բանակին նոր ստեղծագործական հաջողությունների է ոգեշնչում հետազոտությունների զարգացման գործում, կոմունիստական շինարարության պրակտիկայի հետ գիտության կապի հետագա ամրապնդման ասպարեզում։

Համոզված եմ, որ արտահայտած կլինեմ ոչ միայն այս հանդիսավոր ժամին այստեղ հավաքված գիտնականների, այլև Սովետական Միության գիտության բոլոր աշխատողների ընդհանուր և միահամուռ զգացումը, եթե ասեմ, որ մենք բախտավոր ենք մեր մեծ երկրում ապրելու համար, որտեղ գիտությանը հատկացված է այդքան պատասխանատու ու պատվավոր դեր, որտեղ այսքան բարձր է գնահատվում գիտության աշխատողների վաստակը։

ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովի և ակադեմիայի գիտնականների ու աշխատակիցների ամբողջ կոլեկտիվի անունից զեկուցողը ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեին, ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությանը, սովետական կառավարությանը, սրտաբուխ շնորհակալություն հայտնեց ակադեմիային հասցեագրված ջերմ ողջույնի, նրա գործունեության բարձր գնահատականի համար, ակադեմիան Լենինի երկրորդ շքանշանով պարգևատրելու և ակադեմիայի աշխատողների մի մեծ կոլեկտիվի շքանշաններով ու մեդալներով պարգևատրելու համար։ Մենք, ասաց հեռտորը, այդ բարձր պարգևները ընկալում ենք որպես ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի, սովետական գիտու-